



ST. LEON'S ARMENIAN CHURCH


FAIR LAWN, N. J.




ANNUAL



1969




REPORT



ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԵՐԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ

ՖԵՐԼՈՆ, Ն.Ճ.

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ



ST. LEON'S ARMENIAN CHURCH
Fair Lawn, N.J.

ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ
Ֆերլոն, Ն. Ճ.

ANNUAL PARISH ASSEMBLY
Sunday, February 1, 1970
Following Church Services

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ
Կիրակի, փետրուար 1, 1970
Յաւարտ Սուրբ Պատարագի

AGENDA

ՅԱՅՏԱԳԻՐ

- | | |
|---|-----------------------------------|
| 1. Opening Prayer | 1.- Բացման Աղօթք |
| 2. Verification of Eligible Voters | 2.- Ստուգում տրատու անդամներու |
| 3. Election of the Assembly Officers | 3.- Ընտրութիւն ժողովի ղիւանի |
| 4. Reading of 1969 Meeting Minutes | 4.- Ընթերցում 1968ի ատենագրութեան |
| 5. Report of the Pastor | 5.- Չեկոյց Հովիւի |
| 6. Report of the Parish Council | 6.- Տեղեկագիր Հոգաբարձութեան |
| 7. Report of the Church Organizations | 7.- Տեղեկագիրք կազմակերպութեանց |
| 8. Financial Report | 8.- Տնտեսական հաշուէտուութիւն |
| 9. Approval of proposed budget for 1970 | 9.- 1970 տարուան պիւտճէն |
| 10. Election of Parish Council Members | 10.- Ընտրութիւն Հոգաբարձութեան |
| 11. New Business | 11.- Նոր Հարցեր |
| 12. Closing Prayer | 12.- Փակման Աղօթք |

ՀՈՎԻՒՒՄ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍԻՐԵԼԻ Ծխականներ,

Շնորհակալ եմ Աստուծոյ որ կարողացայ տարի մը եւս ըլլալ ձեզի հետ եւ միատեղ աշխատիլ Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ պայծառութեան եւ յառաջդիմութեան համար:

Նախ կուզեմ իմ շնորհակալութիւնս յայտնել եկեղեցւոյ բոլոր ծխականներուն: Վասնզի դուք բոլորդ ալ ծառայեցիք եկեղեցւոյ մեծ նուիրումով: Արդարեւ, ձեր բոլորին նիւթական եւ բարոյական զոհողութեան շնորհիւ կարելի եղաւ յառաջդիմութիւն արձանագրել:

Նաեւ շնորհակալութեան խօսք ունիմ Կիրակնօրեայ եւ Հայ Դպրոցներու ուսուցիչներուն, Դպրաց Դասի անդամներուն, կազմակերպութեանց վարչութեանց, մասնաւոր Յանձնախումբերուն ու մանաւանդ՝ Հոգաբարձութեան: Արդարեւ դուք բոլորդ ալ համախորհուրդ եւ սիրով գործակցեցաք ի պայծառութիւն եկեղեցւոյ:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ.— Ձեր հովիւին կողմէ 1969 տարուան ընթացքին կատարուած են հետեւեալ գործերը.

1.— ՊԱՇՏԱՄՈՒՆՔ.— Տարուան ընթացքին եկեղեցւոյ արրարողութիւնները կատարուած են կանոնաւոր կերպով: Յատուկ պաշտամունք կատարուած է նաեւ զանազան տօներու առիթով:

Անցնող տարուան ընթացքին մեր մէջ հիւրաբար գտնուած են, Գեր. Տ. Վաչէ Եպսկ. Յովսէփեան՝ փոխանորդ Գանատայի, Հոգ. Տ. Վազգէն Վրդ. Քէշիշեան՝ Հովիւ Միլուոքիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ, Արժ. Տ. Սարգիս Քհնյ. Գաշըքեան՝ հովիւ Շիգակոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ եւ Արժ. Տ. Առնակ Քհնյ. Գասպարեան՝ հովիւ Թէնէֆլայի Ս. Թովմաս եկեղեցւո:

Ինչպէս նաեւ հերթին քաղաքի Ամերիկեան եկեղեցիներու հետ միատեղ ունեցանք ՄԻԱՑԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ, Աւագ Ուրբաթ օր, մեր եկեղեցւոյ մէջ:

2.— ԾԵՍ.— Անցնող տարուան ընթացքին ունեցած ենք.

ա.— Մկրտութիւն՝ 10, Պսակ՝ 4, Թաղում՝ 12: Նաեւ այլ եկեղեցիներու մէջ կատարած եմ 4 պսակ եւ 3 թաղում:

3.— ԺՈՂՈՎՆԵՐ.— Ընթացքիկ տարուան մէջ մասնակցած եմ Ծուխիս մէջ գումարուած բոլոր ժողովներուն: Ծուխէն դուրս եւս ներկայ եղած եմ շարք մը ժողովներու:

4.— ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.— Անցնող տարուան ընթացքին ջանացած եմ այցելել բոլոր հիւանդները, ինչպէս նաեւ տալ հովուական այցելութիւն ծխականներուն՝ թէ ցերեկները եւ թէ երեկոյները:

5.— ԳՐԱՍԵՆՆԵԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ.— Տարուան ընթացքին գրասենեակէն ներս կատարուած են հետեւեալ գործերը.

ա.— Ամէն Կիրակի օրուայ համար պատրաստուած է երկլեզուեան քարոզ:

Ե.— ԼՐԱՏՈՒ ԹԵՐԹԻԿՐ ամէն ամիս կանոնաւորաբար ղրկուած է աւելի քան 600 ընտանիքներու: Տարուան ընթացքին նաեւ ղրկուած են շարք մը յատուկ յայտարարութիւններ եւ գրքոյկներ մեր ծխականներուն: Այս առթիւ կուզեմ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել Արամ Մազուհեանին՝ որ միշտ ալ պատրաստած է յայտարարութեանց բոստըրները, Երէցկիին՝ որ կատարած է անգլերէն մեքենագրութիւնները եւ բոլոր անոնց որոնք Լրատու Թերթիկին համար գրութիւններ պատրաստած են կանոնաւորաբար:

7.- Գլխաւորած եմ համայնքիս Հայ Դպրոցը եւ ստանցնած՝ երգի բա-
ժինը:

8.- ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ.- Այս տարի եւս ունեցանք չափահասներու համար
կրօնական դասընթացք եւ ես կատարեցի ուսուցումը:

9.- ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ.- Տարուան ընթացքին կատարած եմ գրասենեակիս
բոլոր հայերէն եւ անգլերէն թղթակցութիւնները:

10.- ՀԵՌԱՉԱՅՆ.- Այս տարի եւս հեռաձայնը լաւապէս օգտագործած
եմ, ծխականներու հետ յարաբերութիւն պահելու համար:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Որպէս ձեր հովիւը կուզեմ ընել հետեւեալ թե-
լադրութիւնները, եկեղեցւոյս յառաջդիմութեան համար:

1.- Անհրաժեշտ եւ խիստ կարեւոր է որ բոլոր ծխականներն ալ անխը-
տիր, իրենց մասնակցութիւնը բերեն Շաբաթական Պահարաններու: Վա-
սընգի այդ կերպով միայն դուք պիտի կարողանաք բերել ձեր արդար
բաժինը եկեղեցւոյս պիտոճէին եւ եկեղեցին ալ պիտի կարողանայ
հոգալ ծուխին նիւթական ծախսերը:

2.- Մուխ մը լաւապէս կը յառաջդիմէ, երբ անոր ծխականներուն բո-
լորն ալ կը գործեն եկեղեցւոյ համար: Առանց բացառութեան բոլորդ
ալ պէտք է ունենաք աշխատանքի բաժին մը ծուխէն ներս:

3.- Որպէս պարտաճանաչ ծխականներ պէտք է խիշտ քաջալերէք ձեր ծու-
խին բոլոր ձեռնարկներն ալ անխտիր: Մանաւանդ կրթական, մշակութա-
յին եւ ինչու չէ նաեւ ընկերային ձեռնարկները ձեր բոլորին ալ ու-
շադրութեան առարկան դառնան, որպէսզի յաջողութեամբ պսակուին:

4.- Որպէս քրիստոնեաներ մենք լաւագոյնս արտայայտած կըլլանք մեր
սէրը Աստուծոյ եւ եկեղեցւոյ հանդէպ՝ ամէն Կիրակի կանոնաւորաբար
յաճախելով եկեղեցի: Ձեր Ֆիզիքական ներկայութիւնը եկեղեցիէն ներս
անհրաժեշտ է որպէս հաւատացեալ: Աստուծոյ եւ եկեղեցւոյ գործին նը-
ւիրուիլը զոհողութիւն կը պահանջէ: Ըլլանք նուիրեալ անդամներ ե-
կեղեցւոյ, որպէսզի կարողանանք մեր ազգն ու եկեղեցին միշտ շէն ու
պայծառ պահել:

ԹողՏէր Աստուծ պահէ բոլորդ ալ առողջ, որպէսզի միատեղ շարու-
նակենք աշխատիլ մեր բոլորին սիրելի Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ
պայծառութեան եւ յառաջդիմութեան համար եւ Աստուծոյ յաւիտենական
փառքին համար:

Գառնիկ Քհնյ. Հալլաճեան

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Ուրախ ենք ըսելու որ 1969 տարին եւս յառաջդիմութեան շրջան մը եղաւ եկեղեցւոյս կեանքէն ներս: Այս տարի եւս շրջանս փոխադրուած ընտանիքներէն շատեր, եկան միանալու ծուխիս: Այժմ Կիրակնօրեայ Դպրոցին մէջ ունինք աւելի քան 150 փոքրիկներ եւ մեր ունեցած տեղը արդէն իսկ ըսկըսած է նեղ գալ դասաւանդութեանը համար:

Այս տարի 200 ընտանիքներու ղրկեցինք Շաբաթական Պահարաններ եւ կը յուսանք որ բոլորդ ալ պիտի մասնակցինք: Այժմ ունինք 150 ընտանիքներ որոնք մաս կը կազմեն այդ դրութեան: Ինչպէս որ ընտանիքի մը պարագային որոշ եկամուտ մը անհրաժեշտ է, եկեղեցւոյս պարագային եւս անհրաժեշտ է որ Հոգաբարձութիւնը գիտնայ գալիք եկամուտը եւ այդ կարելի է երբ բոլորս ալ կը մասնակցինք Շաբաթական Պահարաններու:

Այս տարի Հոգաբարձութիւնս գնեց յաւելեալ 20 բիքնիքի սեղաններ որպէս զի գործածուին դաշտահանդէսներու ընթացքին: Ինչպէս նաեւ գնուեցաւ խոտ կտրելու մեքենայ եւ չորցած տերեւներ հաւաքելու մեքենայ: Եկեղեցւոյս յառաջամասը եղող քառակուսիներուն մէջ նոր թուփեր եւ ծաղիկներ գետեղուեցան որպէսզի եկեղեցւոյս մուտքը առաւել գեղեցկանայ: Նաեւ կատարուեցան բազում մանր նորոգութիւններ:

Ուրախ ենք ըսելու որ մեր Պատանիներու Կազմակերպութիւնը, շնորհիւ Մարտ Թիֆէնի, ձէրի Տօնապետեանին եւ ձան Ամիրխանեանին առաջնորդութեան նոր գործունեայ շրջանի մը սկսած է: Ուրախ ենք մասնաւանդ որ կարելի եղաւ այդ պատանիներէն պասքէթ պոլի խումբ մը կազմել որուն հոգ կը տանին ձէք Թարգեան եւ Հէրըլտ Սարգիսոֆ: Այս խումբը ամէն Կիրակի կը մրցի շրջանիս այլ Հայ եկեղեցիներու խումբերուն դէմ:

Հոս յիշելու պէտք չունինք, քանի որ գրկոյքին մէջ պիտի տեսնէք մեր գանձան կազմակերպութեանց եւ Ֆրնտերու նիւթական հաշուէտութիւնները: Շնորհիւ բոլորիդ առատաձեռնութեան, Հոգաբարձութիւնը կարողացած է վճարել եկեղեցւոյս ընթացիք բոլոր ծախքերը եւ նոյն իսկ քիչ մըն ալ հարըստացնել խնայողական սնտուկը:

Շատերս կզգանք բացակայութիւնը եկեղեցւոյս արարողութիւններէն՝ Պրն. Միհրան Նուրիկեանին: Երկար տարիներու ծառայութենէ ետք, ան իր առողջութեան պատճառաւ ինքզինք հանգստեան կոչեց: Բոլորս ալ կը յայտնենք իրեն մեր շնորհակալութիւնը, իր հաւատաւոր ծառայութեան համար:

Մեր բոլորիս ալ մեծ ցաւ պատճառեց անժամանակ կորուստը Ջաւէն Մարութեանին որ երկար տարիներ ծառայած էր ծուխիս, որպէս Հոգաբարձու եւ Երեսփոխան: Ան անգամ էր նաեւ եկեղեցւոյս Պահեստի Դրամագլուխին: Իր բարի խորհուրդները, ազնիւ առաջնորդութիւնը եւ անխոնջ աշխատասիրութիւնը համայնքիս նկատմամբ երբէք պիտի չմոռցուի բոլորիս կպղմէ աէ: Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնենք նաեւ մեր Տէր Հօր, իր հոգեւոր առաջնորդութեան համար, ինչպէս նաեւ՝ Երէցկիներն, իր կատարած աշխատանքներուն համար: Ինչպէս նաեւ շնորհակալութիւն բոլորիդ անխըտիք, որ միշտ նիւթապէս եւ բարոյապէս կօգնէք եւ կաշխատիք, Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ յառաջդիմութեան եւ պայծառութեան համար:

Ալֆրէտ Ա. Ոսկեան-Ատենապետ
Մխական Խորհուրդի

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ

ՀԱՅ ԴՊՐՈՑ. — Այս տարի, դպրոցական վերամուտին 45 փոքրիկներ արձանագրուեցան Հայ Դպրոց: Աշակերտները բաժնուեցան 6 դասարաններու համաձայն իրենց տարիքին եւ հայ լեզուի ծանօթութեան: Դասաւանդութիւնները տեղի ունեցան եկեղեցւոյս սրահին մէջ, ամէն Շաբաթ առաւօտ ժամը 10-12:

Այս տարուան ուսուցիչներն են, Տէր Հայր, Երէցկին Ռոզ, Հէլէն Մարտիրոսեան, Վարդուհի Գիրեան, Սեդա ձէսուրեան, Սաթենիկ Լուսէտ եւ Վահրամ Վարժապետեան: Պարուսոյցն էր Լիզ Թոփճեան: Մայրերու Յանձնախումբի Ատենապետն է Մէրի Հալլըր եւ Գանձապահը՝ Լիլիըն Տի Բալմա:

Աշակերտներու համար գործածուեցաւ Միխիթարեան Հայերու կողմէ պատրաստուած պատկերազարդ դասագիրքեր, ինչպէս նաեւ Պէյրուի տղանուած Անի դասագիրքը: Բոլորն ալ դիւրամատչելի եւ արդիական մեթոտներով պատրաստուած են:

Ինչպէս անցեալին, այս տարի եւս տարեկան Հանդէսի ընթացքին փոքրիկներուն տրուեցաւ այս անգամ, Ս. Էջմիածին պատրաստուած զարդակոճակներ: Ինչպէս նաեւ Քրիսմուս փարթի մը տրուեցաւ ուսանողներուն Ծնունդի առիթով: Տարուան ընթացքին, ուսանողներուն համար կուենանք Վարդանանց Օր, այցելութիւն էմբրսընի Հայ Ծերանոց, Տարեկան Համդէս Ճաշկերոյթ եւ Ամավերջի դաշտագնացութիւն:

Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնենք ուսուցիչներուն եւ խնամակալութեան անդամներուն որոնք կամաւոր եւ սիրայօժար կը գործեն Հայ Դպրոցէն ներս:

ԶՍՔԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՅ ԴՊՐՈՑ. — Ուրախ ենք ըսելու որ այս տարի եւս, շնորհիւ Արսէն ձէրէճեանի, կարելի եղաւ շարունակել Հայ Դպրոցը չափահասներու համար: Արդարեւ, Արսէն ձէրէճեանի խնամքին ներքեւ, խումբ մը չափահասներ շաբաթը իրիկուն մը կը սերտեն մեր Մայրենի լեզուն: Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնենք Արսէն ձէրէճեանին որ կը կատարէ այդ կարեւոր գործը:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ. — Դպրոցական վերամուտին, 152 փոքրիկներ արձանագրուած են Կիրակնօրեայ Դպրոց: Դասաւանդութիւնները կատարուած են եկեղեցւոյս սրահին մէջ, ամէն Կիրակի առաւօտ՝ ժամը 10:30-12:00: Ամէն Կիրակի աշակերտութիւնը կէս ժամ մասնակցած է Ս. Պատարագի պաշտամունքին:

Կիրակնօրեայ Դպրոցը ունի երեք բաժանմունքներ. ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԻ ԲԱԺԻՆ. — Այս բաժնին պատասխանատուն է Տատի Քարամեան, իսկ իր օգնականներն են Ռուիթ Պետեւեան եւ Քէյթի Էքմէքճեան: Այս խումբին համար գեղեցիկ սրահ մը պատրաստուեցաւ հովուատան ներքնամասին մէջ:

ԿՐՏՍԵՐԱՅ ԲԱԺԻՆ. — Այս խումբին պատասխանատուն, այս տարի եւս էնն ֆէյսն է եւ իրեն օգնականներն ունի, էտնա Թընկրեան, էնն Մարուիեան, էնտրիա Թիլպեան, ձէնիս Նուրիկեան, Ռեբեկա Պագալեան, Տէպի Տօնապետեան, ձէնիս ձէրահեան, Վիքի Թարգեան, Մէրի Լի Պողոսեան, Սուզըն Խաչիկեան եւ ձօրճ Մարուիեան:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԲԱԺԻՆ. — Այս խումբին պատասխանատուն է Երէցկին Ռոզ
Հալլաճեան եւ իրեն օգնականներ ունի էլսի Պետրոսեան, Մէրի Հա-
լլըր, Ալան Տէրօեան, Մէրի Տապաղեան, Արփի Վարդանէսեան, Վարսէն
Թորոսեան, Ակնէս Ոսկեան եւ Ռոզ Նահարեան:

Առաջնորդարանի Կրօնական Դաստիարակչական Խորհուրդի կողմէ իսկ
պատրաստուած եւ թելադրուած դասագիրքերը կը գործածուին Կիրակնօր-
եայ Դպրոցէն ներս:

Կիրակնօրեայ Դպրոցը իր ծախսերը կը հոգայ փոքրիկներուն Շաբա-
թական Պահարաններու միջոցաւ ըրած նուէրներով եւ Ս. Ծննդեան եւ
Ս. Զատկուան առիթով կատարուած նուէրներով:

Դպրոցին Գանձապահն է Հէլլէն Վըրկա, Ատենադպիրը՝ Տատի Քարամ-
եան, Փապլըսիթի՝ Վարսէն Թորոսեան եւ Ներկայ-բացակային հսկող՝
Կլորի Թովմասեան: Իսկ օգնական ուսուցիչներ են, Ռոզ Մարտիրոս-
եան, էնն Զէքէմեան եւ էտ Ազարեան:

Տարուան ընթացքին կը կատարուին հետեւեալ ձեռնարկները.

Ս. Ծննդեան Հանդէս:

Ս. Հաղորդութիւն՝ Ծննունդի եւ Զատկուայ առիթներով:

Վարդանանց Տօնի Ս. Պատարագ:

Զատկուայ Ծաղիկ բոլոր ուսանողներուն:

Տարեկան ճամբորդութիւն Շէյ Խաղավայրը:

Տարեկան դաշտահանդէս:

Հալովինի հանդէս եւ յայտագիր:

Թէնքսկիվինկի նուէր էմըրսընի Ծերանոցին:

Խաղալիքներու նուէրներ փասէիթի աղքատ փոքրիկներուն:

Այս առիթի մեր մասնաւոր շնորհակալութիւնները դպրոցի ն համար
գործող բոլոր ուսուցիչներուն եւ անձերուն: Կասկածէ վեր է որ հե-
տը հետէ մեծցող Կիրակնօրեայ Դպրոցը պէտք ունի դասարաններու եւ
կը յուսանք որ համայնքը օր մը կարողանայ տալ այդ մեր դպրոցներուն:

Մեր շնորհակալութիւնը նաեւ բոլոր ծնողներուն որոնք ամբողջ
տարուան ընթացքին, իրենց զաւակները կանոնաւորաբար կը բերեն Կի-
րակնօրեայ Դպրոց, որպէսզի անոնք կարենան ստանալ կրօնական դաստի-
արակութիւն, համաձայն մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդութեանց
եւ ուսուցմանց:

ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՅԱՆՆԱԽՈՒՄԲ

Այս Յանձնախումբին անդամներն են.

Ատենապետ Զէրի Տօնապետեան

Ատենադպրուհի Ակնէս Քափոեան

Խորհրդական Տաթի Տէտէեան

Յանձնախումբը յատուկ ժողովներ չէ ունեցած, բայց հեռաձայններով
կարելի եղած է գործերը կատարել:

Յանձնախումբը ամբողջ տարուան ընթացքին, մասնաւոր քարտեր ղրկած
է բոլոր ծխականներուն՝ ուրախ եւ կամ տխուր առիթներով:

Յառաջիկայի համար կը ծրագրենք քարտ ղրկլլէ զատ նաեւ կազմակերպել
ընտանեկան այցելութիւններ, որքան որ կարելի է:

Զէրի: Տօնապետեան—Ատենապետ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏԻԿՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ.- Տիկնանց Վարչութիւնը անցնող տարուան ընթացքին ունեցած է 7 ժողովներ, իսկ Միութիւնը՝ 9ը: Անցնող տարուան ընթացքին անդամներուն թիւը 7/էն բարձրացած է 101ի: Ամէն ամիս ամսական ժողովներուն միջին հաշուով 38 անդամներ ներկայ եղած են: Ժողովներէն ետք ներկայները միշտ հիւրասիրուած են սուրճ եւ կարկանդակով:

1969 տարուան Վարչութեան կազմը եղած է.
 Ատենապետ Ֆլորէնս Կիւլիասեան
 Փոխ Ատենապետ Ակնէս Ոսկեան
 Գանձապահ Արլին Տատէքեան
 Փոխ Գանձապահ Էմմա Թարագաճեան
 Ատենադպիր Վարսէն Թորոսեան
 Թղթակցութեան Քարտուղար Մարկըրիթ Տօնապետեան
 Խորհրդական Տըվի Թիւպեան

Իսկ նշանակովի պաշտօններ ունեցած են.
 Փալլըսիթի Էնն Խաչիկեան
 Անդամներու Տըվի Թիւպեան
 Հիւրասիրութեան Էլսի Տօնիկեան
 Այցելութեան Մէրի Թիւպեան եւ Մարիձա Կիրակոսեան
 Յայտագիր Ակնէս Ոսկեան
 Քարտերու Քարոլ Սուճեան
 Խոհանոցի Մաքրութեան Մարկըրիթ Ճէրահեան

Ամէն ամիս, ամսական ժողովներէ ետք ունեցած ենք խօսող մը, հետաքրքրական նիւթի մը շուրջ: Ունեցած ենք նաեւ Ծնունդի առիթով հաւաքոյթ եւ Յունիս ամսուայ մէջ անդամներու ի պատիւ ճաշ: 1969 տարուան ընթացքին ունեցած ենք հետեւեալ հասութեան ձեռնարկները.

Լուկի Ճաշ, Մարտ 11ին, Ատենապետութեամբ Քէյթի Ամիրխանեանին եւ Ակնէս Ոսկեանին:

Ռամէն Սէյլ, Մայիս 2ին, Ատենապետութեամբ՝ Արմենուհի Տէր Աբրահամեանին եւ Աստինէ Սաղաթէլեանի:

Կազմակերպութեանս 40ամեակը, Սեպտ. 14ին, Յանձնախումբ՝ Վարչութիւն: Պըրկըն Մուրի Ֆէսթիվալը, Սեպտ. 26ին, Ատենապետութեամբ՝ Լուսի Տապաղեանի:

Ռամէն Սէյլ, Նոյ. 5ին, Ատենապետութեամբ՝ Հէլէն Թարգեանի եւ Լուսի Առաքելեանի:

Տարեկան Պազար, Նոյ 15-16, Յանձնախումբ՝ Վարչութիւն:

Իսկ տարուան ընթացքին Վայրլէթ Ոսկեանի գլխաւորութեամբ չիվըր Պրատըր ընկերութեան մօտ տիկիններու խումբեր գացած են արտադրութիւններ քննելու համար:

Կազմակերպութեան տարեկան եկամուտը եղած է աւելի քան վեց հազար տուար, շնորհիւ բոլոր անդամներուն ալ բոլորանուէր գործակցութեան եւ ծառայութեան:

Այս առիթի շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անդամներուն ալ որ սիրով գործակցեցաք ձեր իսկ ընտրած Վարչութեան հետ եւ ունեցանք յաջող տարի մը:

Ֆլորէնս Կիւլիասեան- Ատենապետ

ԴՊՐԱՑ ԴԱՍ

Ինչպէս անցեալին, 1969 տարուան ընթացքին եւս եկեղեցւոյս Դպրաց Դասը կանոնաւորաբար մասնակցեցաւ եկեղեցական արարողութեանց:

Եկեղեցւոյս Դպրաց Դասի Վարչութիւնն է.	
Ատենապետ	Զարլզ փինէճեան
Ատենադպիր	Հէլէն Մազուճեան
Գանձապահ	Յակոբ Տէմիրճեան
Դպրապետ-Օրկընիստ	Լուսի Տապաղեան
Օգնական Օրկընիստ	Ճորճ Մարութեան

Դպրաց Դասը ունի 6 խորանի սպասարկող ուրարակիներ եւ դպիրներ, իսկ Դրաց Դասի մէջ՝ 25 անդամներ: Տարուան ընթացքին ունեցած ենք 2 վարչական ժողով եւ՝ 6 անդամական: Ունեցած ենք 18 փորձեր: Որպէս Դպրապետ, շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անդամներուն ալ, որոնք ամէն Կիրակի կանոնաւորաբար կուգան եկեղեցի, Դպրաց Դասի միջոցաւ ծառայելու համար մեր բոլորին սիրելի Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյս Երիտասարդաց Կազմակերպութեան կրտսերաց խումբը, հըս-կողովութեանը ներքեւ Մարճ Թիւֆէնքի եւ Ճէրի Տօնապետեանի, ունեցաւ լաւ գործունէութիւն: Անցնող տարուան վարչութեան անդամներն էին.

Ատենապետ	Ռեբեկա Պազալեան
Փոխ Ատենապետ	Տրու Տապաղեան
Ատենադպիր	Սուզըն Խաչիկեան
Փապլըսիթի	Սուզըն Խաչիկեան
Թղթակցութեան Քարտուղար	Տէպի Տօնապետեան
Գանձապահ	Գարըլ Նազաշեան

Ընդհանուր տրատու անդամներուն թիւը եղած է 17: Տեղի ունեցաւ 1 վարչական եւ 5 անդամական ժողովներ:

Անցնող տարուան ընթացքին ունեցած ենք հետեւեալ ձեռնարկները. Հալովիների փարթի, Քէյք Սէյլ, Պազարի Խաղեր, Քրիսմըս փարթի շրջանի Երիտասարդաց խումբերու համար, Պասքէթ Պոլի կազմութիւն: 1970ի համար կը ծրագրենք ունենալ Երիտասարդաց Օր Ապրիլ ամսը-ւան ընթացքին:

Ռեբեկա Պազալեան-Ատենապետ

ԱՅՐԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ /Մէնջ ԲԸԼԱՊ/

Եկեղեցւոյս Այրերու Կազմակերպութիւնը ունեցաւ գործունէայ տարի մը: Անցնող տարուան վարչութեան անդամներն էին.

Ատենապետ	Թէտ Թազուրեան
Փոխ Ատենապետ	Զաւէն Տատէքեան
Ատենադպիր	Զարլզ փինէճեան
Գանձապահ	Սարգիս Խաչիկեան
Խորհրդական	Ճան Ճէրահեան եւ Ալ Ոսկեան

Տարուան ընթացքին Կազմակերպությունս ունեցած է հետեւեալ ձեռնարկները.

Ճաշկերոյթ /ի նստուի էջընի/ Յունուար 1969

Վիճակահանութիւն Զորտ ինքնաշարժի մը

Պարահանդէս եւ Վիճակահանութիւն Յունիս 1969

Անցեալ տարի Կազմակերպությունս տուած է Հազար տոլար եկեղեցւոյս եւ գնած է նաեւ Շարժապատկերի մեքենայ մը 16 միլիմէթրը ժապաւէններու համար եւ ձայնաւոր կազմով:

Կազմակերպությունս 1970 տարուայ համար կը ծրագրէ ձեռնարկներ եւ երեկոյներ թէ՛ այրերու եւ թէ՛ տիկիներու համար միատեղ, որպէսզի կարելի ըլլալ ծուխին զոյգերը իրարու մօտ բերել:

Չաւէն Տատէքեան-Փոխ Ատենապետ

ՄՇԱԿՈՒԹԱՅ ԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Անցնող տարուան ընթացքին եկեղեցւոյս Մշակութային Յանձնախումբը կազմակերպեց շարք մը ձեռնարկներ.

Վարդանանց Տօնակատարութիւն Փետրուար 1969

Ապրիլեան Եղեռնի Յիշատակահանդէս Ապրիլ 1969

Կոմիտասի եւ Յ. Թումանեանի 100ամեակի Տօնակատարութիւն Հոկտ.

Վերոյիշեալ ձեռնարկները կարելի եղաւ կատարել շնորհիւ Վարչութեան անդամներուն որոնց անուներն են.

- | | |
|------------------------|--|
| Ատենապետ | Միրճան Գիրեան |
| Ատենապետ | Արսէն Ճէրէճեան |
| Ատենադպիր | Արլին Տատէքեան |
| Թղթակցութեան Բարտուղար | Հէլէն Մարտիրոսեան |
| Գանձապահ | Լուսի Տապաղեան |
| Անդամներ | Նուպար Ճէսուրեան, Սեպուհ Ճէսուրեան, Լիզ Թոփճեան, Փիթըր Ճրզրալի եւ Տիգրան Պազալեան: |

Մշակութային Յանձնախումբը կը ծրագրէ կազմակերպել Վիճակահանական երեկոյներ եւ Դասախօսութիւններ նոր տարուան շրջանին:

Միրճան Գիրեան-Ատենապետ

ԳՐԱԴԱՐԱՆ

Եկեղեցւոյս Գրադարանը հետզհետէ կը ճոխանայ, շնորհիւ ազգայիններու նուիրատուութեանց: Արդէն իսկ հարիւրաւոր պատմական, գրական, կրօնական, բանասիրական եւ այլ հայերէն ճոխ հաւաքածոներ ունինք: Ունինք քանի մը տասնեակ անգլերէն գիրքեր հայութեան մասին գրուած: Գրադարանը կստանայ շարք մը անգլերէն եւ հայերէն օրաթերթեր, ամսաթերթեր եւ պարբերականներ:

Դժբախտաբար խղճամիտ եւ աշխատունակ Գրադարանապետը Տիար Խոսրով Քաթիպեան Ռոտ Այլընտ փոխադրուեցաւ եւ կը յուսանք որ հետաքրքիր ազգային մը կը փոխարինէ զինք:

Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնենք Պրն. Խոսրով Քաթիպեանին:

Շնորհակալութիւն նաեւ բոլոր նուիրատուներուն:

Գրադարանը միշտ բաց է ամէն Կիրակի առաւօտ:

PASTORAL REPORT

Dear Parishioners,

I am thankful to God that as your Pastor I was able to work with you another year for the progress of our beloved St. Leon's Church.

First, I want to express my sincere thanks to you all for your unlimited devotion and service for your community. As the parishioners of St. Leon's Armenian Church, I know, you have given full financial and moral support to your church.

Secondly, I want to extend my thanks to all the teachers of the Armenian and Sunday Schools, to the members of the Choir, to all the Executive Committees, to the Special Committees and above all to the members of the Parish Council. You worked very hard in order to achieve another successful year.

As your Pastor, I was able to bring my share to that success by doing the following.

PASTORAL ACTIVITIES

Worship

During 1969 we were able to conduct our church services regularly.

During the past year, we were privileged to have with us as guest celebrants, Bishop Vatche Hovsepian, Vicar of Canada, Very Rev. Vazken Keshishian, pastor of St. Haroutune Church, Milwaukee, Wisc., Rev. Sarkis Kashikjian, pastor of St. Gregory Church, Chicago, Ill., and Rev. Arnak Kasparian, pastor of St. Thomas Church, Tenafly, N.J.

We also had joint service with the neighboring American Churches on Good Friday in our church.

Rituals

During 1969 the total of the rituals were as follows:

Baptisms	10	Weddings	4	Funerals	12
----------	----	----------	---	----------	----

I also conducted 4 weddings and 3 funerals in other churches.

Meetings

During the past year I attended all the meetings in the parish. I also attended several other meetings outside of our parish.

Visitations

During 1969 I have tried my best to visit sick people in the hospitals and gave family visitations during the day and the evenings.

Desk Work

The following are the office work done by your pastor.

- a. Prepare sermon for every Sunday in both languages.
- b. Every month Lradoo was published and mailed to over 600 families. Also circulars, flyers, and booklets were prepared for various affairs and mailed during the year. I like to thank Aram Mazoujian for preparing all the posters, Yeretzgin Rose for doing the office English typing and all the reporters who wrote articles for the church paper.
- c. Heading the Armenian School and teaching songs to students.
- d. Conduct the Catechism Class.
- e. Do all the correspondence.
- f. Kept in touch with people by telephone.

Suggestions

As your Pastor, I would like to make the following suggestions:

- a. It is utmost important that we all take part in Weekly Envelope System. Only then as good stewards of God, can we all bring our full share to the financial needs of our church.
- b. You should all get involved in the parish work. Our church will progress more, if all the parishioners are involved with the community work. Do your part without hesitation.
- c. As parishioners of St. Leon's Armenian Church you must give full support to all the activities of your community. You should see that educational, cultural and social activities are always successful. And that can be done only by your cooperation and hard work.
- d. The only way you can express your true love and deep concern towards God and church is by being physically present in church and worshipping your God every Sunday. God wants total commitment from us. Let us commit ourselves to Him. Only then can we really feel strong as community and achieve much success.

May God keep you all in good health, so that together we can work for a more fruitful year, for the progress of our beloved St. Leon's Church and for the everlasting glory of God:

Prayerfully,

Der Carnig Hallajian

PARISH COUNCIL

1969 has been another year of progress and growth in all areas of our Church.

The influx of new families in our area has added to our Church attendance and also to our Sunday School and Armenian School. Sunday School enrollment is now over 150 children and this number, which we know will increase, is presently taxing our available space for proper schooling of these children.

This year we mailed out 200 sets of weekly envelopes for use in 1970. Of these approximately 150 families have been using them. We earnestly urge all members of our Church to please put this system into use as the administration of the Church is very difficult without knowing what income can be expected weekly. Just as you could not manage your home and meet your financial obligations without knowing what your weekly income would be, your Church can not operate properly and budget itself without knowing what its income is going to be. If any one has not received his envelope set please see any member of the Parish Council and it will be forwarded to you.

We have purchased this year 20 picnic tables and bench sets for our grounds; a lawn mower for the care of the grass; a leaf vacuum pickup; stocked the two planters in front of the Church entrance with trees, flowers, shrubs and ground cover; and many other minor items.

The small house in back of the parish house is still rented and continues to return a small steady income to our treasury.

Our ACYOA is now quite well established through the efforts of advisors Marge Tfrank, Jerry Donabedian and John Amerkanian. We have formed a basketball team of ACYOA boys and they now play regularly in the Armenian-Inter-Church League on scheduled Sunday afternoons. Coach Jack Tarzian and assistant Harold Sargisoff spend many hours of practice with the boys and their efforts are beginning to show in our team.

There are other reports in these pages concerning our parish finances, such as parish bank balances, trustee account, mortgage, etc. and they need not be repeated here. I will only add that all our financial obligations have been met and still our treasury has grown.

I know many of you have been aware of the absence of Mr. Mehran Noorigian from among the deacons at the altar. After many years of faithful service to his Church he has relinquished his duties due to the strain on his health. We all thank him for his many years of devoted service.

A sadder note this year was the passing away of Mr. Zaven Marootian, one of our members of the trustee committee. His council, guidance and untiring service to his Church will be missed by all.

I am sure I express the feeling of all the Parish Council and our parishioners when I say that we are most grateful for the dedicated religious leadership and guidance of Der Carnig and the untiring work of Yeretzgin Rose. Through their efforts our Church has thrived and grown.

Alfred A. Voskian
Parish Council Chairman

ARMENIAN SCHOOL

Teaching Staff Rev. Carnig Hallajian
 Yeretzgin Rose Hallajian
 Satenig Loughead
 Rose Kirian
 Seta Jessourian
 Helen Mardirossian
 Vahram Varjabedian

Dance Instructor Liz Topjian

Mothers Committee
 Chairlady Mary Huller

Treasurer Lillian DePalma

The entire staff volunteer their services.
Our special thanks for their continued devotion
and effort to the Armenian School.

Enrollment 45 students - Ages 4-15

School Day and Saturdays from 10 A.M. - 12 Noon
 Hours All classes meet in the church hall.

Curriculum Students are divided into six classes according
 to their age and knowledge of the Armenian
 language.

Textbooks printed by Mekhitarist Fathers in Venice
and in Beirut are used in classes.

Special Activity Sheets prepared by the Armenian
School Teachers Association of New Jersey are
used in the Primary Grades.

Subjects taught: Reading, Writing, Conversation,
History, Folk Songs and Dances.

Main Activities Vartanantz Day Luncheon, Visit to the Home in
 Emerson, Dinner-Hantess, Annual Outing,
 Christmas Party

Gifts Special Holy Etchmiatzin pin was presented to all
 students at the annual Hantess.

A colorful package of Christmas candy was given
to all students at the Christmas party.

Tuition

\$10.00 is charged per student to defray the expenses of the school. All students are provided with textbooks, notebooks and necessary school supplies.

Comments

There is an urgent need of individual classroom facilities for convenience and better education of our parish children.

We thank the parents who appreciate the great importance of our Armenian heritage and bring their children to Armenian School.

TREASURER'S REPORT

INCOME

Tuition	\$ 335.00	
Raffle	67.75	
Hantess	255.55	
Candle lighting	275.00	
Donations	34.85	
Misc.	<u>55.67</u>	
Total		\$ 1023.82

DISBURSEMENTS

Hantess	181.33	
Outing	36.70	
School Supplies	25.00	
Carpenter	40.00	
Books	155.55	
Pins	50.00	
Parish Council (%)	<u>430.00</u>	
Total		\$ 918.58
Balance		\$ 193.29

ADULT ARMENIAN CLASS

We are happy that our Adult Armenian Class is continuing its second year under the capable teaching of Mr. Arsen Jerejian.

A group of interested adults gather every Friday evening in the church annex in order to increase their knowledge of the Armenian language.

We express our sincere thanks to Mr. Jerejian for his special devotion and effort for conducting this class and we hope he will be able to continue for many years.

CHURCH SUNDAY SCHOOL

CURRICULUM

Religious materials recommended by the Council for Religious Education are used in the classes held in the church hall on Sunday mornings from 10:30 a.m. to 12 noon.

We have started a new Nersery Department where worship service and lessons are conducted for Cradle Roll babies and children up to the age three.

Primary Department conducts its own worship service and assembly and classes.

In the Secondary Department each class conducts the Bible reading of the day and discussion on the various feast days. This year we are devoting the assembly time on the study of the Divine Liturgy.

ENROLLMENT

Nursery Department	12
Primary Department	67
Secondary Department	73
Total Enrollment	152

TEACHING STAFF

Nursery Department Teachers	Dottie Karamian, Superintendent Ruth Bedevian, Kitty Ekmekjian
Primary Department Teachers	Ann Pace, Superintendent Edna Tungrian, Ann Marootian Preschool Andrea Tilbian, Janice Jerrahian, Kdg. Rebecca Bakalian, Debbie Donabedian, Grade 1 Vickie Tarzian, Janice Noorigian Grade 2 MaryLee Boghosian, Susan Kachigian Grade 3 George Marootian Grade 4
Secondary Department Teachers	Yeretzgin Rose Hallajian, Superintendent Elsie Bedrosian Grade 5 Mary Huller Grade 6 Alan Deronian, Elsie Donigian Grade 6 Mary Dabbakian Grade 7 Arpie Vartanesian Grade 7 Varsen Torosian Grade 8 Agnes Voskian Grade 9 Rose Najarian Graduating Class

OFFICERS

Treasurer, Choir Director
Attendance Officer, Secretary
Publicity Director
Recording Secretary
Pianists

Helen Verga
Gloria Tomasian
Varsen Torosian
Dottie Karamian
Janice Jerrahian, George Marootian
Andrea Tilbian
Ed Azarian
Anne Chekemian
Rose Mardirossian

Substitute Teachers

MONEY RAISING ACTIVITIES

Lenten and Christmas Folders
Weekly Offering Envelopes

1969 ACTIVITIES

Christmas Pageant
Holy Communion & Communion Breakfast (Christmas)
St. Vartanantz Day Church Service
Holy Communion & Communion Breakfast (Easter)
Easter plants given to all students
Annual trip to Shea Stadium for Secondary Department students
Annual picnic on church grounds for Primary Dept. students
Rally Day and Registration
Halloween Party
Thanksgiving Turkeys to the Home in Emerson
Santa's Toy Chest to Children's Shelter of Passaic County

COMMENTS

Our heartfelt thanks to Der Carnig Hallajian for all his assistance and to all the parents who faithfully bring their children to Church School.

We are in urgent need of individual classroom facilities for the better education of our parish children.

CHURCH SUNDAY SCHOOL

FINANCIAL REPORT

INCOME

Checking Account Balance	12/31/68	\$ 35.16	
Savings Account Balance	12/31/68	511.95	
Collection		940.75	
Christmas and Easter Folders		412.40	
Misc.		<u>59.45</u>	
	Total		\$ 1959.71

EXPENSES

Christmas Pageant		\$ 115.00	
Books and Activity Sheets		513.13	
Parish Council 80%		437.69	
Misc.		253.33	
Deposit 20% Special Account		<u>109.42</u>	
	Total		<u>1428.57</u>
	Balance		\$ 531.14

PROOF

Checking Account Balance	53.70
Savings Account Balance	<u>39.75</u>
Special Savings Account Balance	467.21

LADIES AID SOCIETY

The Executive Board met for seven meetings. We had nine membership meetings, held on the first Wednesday of each month at 8:15 P.M. We have 101 dues paying members. This is an increase over last year of 27 new members. Our average attendance at meetings were 38. Refreshments are always served at each meeting and are donated by the members.

Our Officers for 1969 and our Committee Chairmen for the past year were:

Chairman	Florence Gulkasian
Vice Chairman	Agnes Voskian
Treasurer	Arline Dadekian
Asst. Treasurer	Emma Tarakajian
Rec. Secretary	Varsen Torosian
Cor. Secretary	Margaret Donabedian
Advisor	Dovie Tilbian
Publicity	Anne Kachigian
Membership	Dovie Tilbian
Hospitality	Elsie Donigian
Visitation	Mary Tilbian-Maritza Giragosian
Program	Agnes Voskian
Sunshine	Carolyn Soojian
Kitchen Clean-Up	Margaret Jerrahian

Our Programs for the year were:

January	-	Armenian Christmas Program and Hobby Exchange
February	-	Mandik-Demonstration of Pastries
March	-	Guest Speaker-Hackensack Hospital-"Community Services"-Mr. Elliott
April	-	Fashion Show-Home Made Items-Members Modeled
May	-	Guest Speaker-Huffman & Boyle-"Interior Decorator"-. Mr. John Clancy
June	-	Board Members Dinner in honor of incoming members
September	-	Speaker-Der Carnig Hallajian
October	-	Culture Month-Paintings by Mr. Ed Boghosian
November	-	Business Meeting
December	-	Guest Speaker-Regina Ekizian-Director of Recreation for Handicapped Children-St. Vartan Cathedral

Our money-making affairs for the year 1969 were:

- March 11, 1969 - Fish Dinner - Chairman Katie Amerkanian
Profit \$291.50 Agnes Voskian
- May 2, 1969 - Rummage Sale- Chairman Armenoohy DerAprahamian
Profit \$190.33 Asdine Sagatelian
- September 14, 1969 - 40th Anniversary Dinner - Chairman -Executive
Profit \$1,266.92 Board Members
- September 26, 1969 - Bergen Mall Festival - Chairman Lucy Dabagian
Profit \$505.39
- November 5, 1969 - Rummage Sale - Chairman Helen Tarzian
Profit \$89.40 Lucy Arakelian
- Nov. 15, 16, 1969 - Annual Bazaar - Chairman - Executive Board
Profit \$3,255.04 Members
- Lever Brothers Testing Laboratories - Chairman Violet Voskian
Profit \$345.50

I would like to express my sincere gratitude to our Der Hayr, who guided us through this year. My sincere thanks to the Executive Board and every member who worked with us, to make this a profitable year. May we continue in good health and work for our beloved church. A check for \$4,610.29 has been turned over to the Parish Council for the year 1969.

Respectfully submitted,

Florence Gulkasian
Chairman
Ladies Aid Society

LADIES AID SOCIETY

FINANCIAL REPORT

INCOME

Membership Dues	\$ 172.00
Lever Bros.	345.50
Fish & Chips Dinner	291.50
Rummage Sale	190.33
Food Festival	505.39
40th Anniversary Dinner	1266.92
Rummage Sale	89.40
Bazaar	3255.06
Misc.	197.17
Total	\$ 6313.27

DISBURSEMENTS

Food - Meetings	59.28
Postage, cards, etc.	67.67
In Memoriam	30.30
Food Baskets	24.61
Dishes	36.00
Improvements (Ladies Room)	60.00
Misc.	21.81
Parish Council (80%)	4610.29
Total	\$ 4909.96

Checking Account Balance 12/31/68	117.58
Savings Account Balance 12/31/68	5.58
Special Savings Acct. Bal. 12/31/68	3036.26
Receipts for 1969	6313.27
Grand Total	\$ 9472.69
Proof 12/31/69	4909.96
Balance	\$ 4563.73

Checking Account Balance	1084.38
Savings Account Balance	443.09
Special Savings Account Balance	3036.26
Total	\$ 4563.73

CHURCH CHOIR

Names of Executive Committee

Chairman	Charles Pinajian
Secretary	Helen Mazoujian
Treasurer	Hagop Demirjian
Organist & Director	Lucy Dabagian
Asst. Organist	George Marootian

Number of Deacons: 4

Number of Acolytes: 2

Choir Members: 25

Number of Rehearsals: 18

Main Activities: Singing Divine Liturgy every Sunday
Participating in Mass held at Home for
Armenian Aged in Emerson at Easter and
Easter

Future Plans: Continue serving every Sunday
Prepare more members for the choir

TREASURER'S REPORT

INCOME

Savings Account 12/31/68	\$ 380.54	
Donation	10.00	
Misc.	<u>14.51</u>	
Total		\$ 405.05

DISBURSEMENTS

Flowers and Fruits	\$ 50.26	
Parish Council (80%)	<u>275.00</u>	
Total		<u>325.26</u>
Balance		\$ 79.79

ARMENIAN CHURCH YOUTH ORGANIZATION OF AMERICA

Names of Executive Committee & Advisors

President	Der Carnig Hallajian
Chairman	Rebecca Bakalian
Vice Chairman	Drew Dabbakian
Rec. Secretary	Susan Kachigian
Piblicity Director	Debbie Donabedian
Cor. Secretary	Carol Nakashian
Treasurer	Mrs. Marge Tfrank
Advisors	Mr. John Amerkanian
	Mr. Jerry Donabedian

Total Membership: 17

Number of Meetings:

Executive Committee	1
General Membership	5

Main Activities: Halloween Party (Get-together for new members)
 Cake Sale
 Decorate Church Hall for Bazaar
 Bazaar Booth
 Christmas Party (New Jersey Churches)
 Co-Sponsor Basketball Team

Future Plans: ACYOA Day Dinner and Program
 Annual Barbeque

TREASURER'S REPORT

INCOME

Checking Account 12/31/68	\$ 437.05	
Saving Account 12/31/68	278.49	
Cake Sale	24.76	
Baza r	47.81	
Misc.	35.15	
	<u>Total</u>	\$ 823.26
		\$823.26

DISBURSEMENTS

Basketball Team	250.00	
Delegate	125.00	
Bazaar	25.00	
ACYOA Party	23.34	
Misc.	18.98	
Parish Council (80%)	304.72	
	<u>Total</u>	\$ 747.04
	Balance	\$ 76.22
		\$747.04

MEN'S CLUB

Names of the Executive Committee

Chairman	S. Theodore Takvorian
Vice Chairman	Zaven Dadekian
Secretary	Charles Pinajian
Treasurer	Sarkis Kachigian
Advisors	John Jerrahian Alfred Voskian

Membership: 27

Meetings:
Executive Committee 9
Membership 8

Main Activities: Installation Dinner
Car Raffle
Purchased projector from car raffle profits

Future Plans: The Men's Club will hold future activities in which the ladies will be invited such as dances, lectures, etc.

TREASURER'S REPORT

INCOME

Checking Account 12/31/68	\$ 1452.05	
Dinner	980.00	
Dues	155.00	
Pastry Sale	21.20	
Raffle and Dance	<u>4314.23</u>	
Total		\$ 6922.48

DISBURSEMENTS

Dinner	825.61	
Parish Council	1000.00	
Projector	415.44	
T.V.	110.00	
Car	2377.67	
Band	175.00	
Basketball Team	100.00	
Printing	53.00	
Mailing	34.00	
License	35.00	
Liquor and Soda	80.00	
Communion Breakfast	30.00	
Coffee Social	<u>243.80</u>	
Total		\$ 5479.52
Balance		\$ 1442.62

CULTURAL COMMITTEE

Names of the Executive Committee

Co-Chairmen	Mirjan Kirian	
	Arsen Jerejian	
Treasurer	Lucy Dabagian	
Cor. Secretary	Helen Mardrossian	
Rec. Secretary	Arline Dadekian	
Membership	Noubar Jessourian, Sebouh Jessourian, Liz Topjian Peter Jesraly, Dikran Bakalian	
Number of Meetings		
Executive Committee	2	
Membership	8	
Main Activities		
February	Vartanantz Celebration	
April	April 1915 Anniversary	
October	Centennial of Gomidas and Toumanian	
Future Plans	Dialectic presentation programs	

FINANCIAL REPORT

INCOME

Checking Account 12/31/68	\$ 285.88	
Dinner	574.66	
Donations	85.00	
Bank Credit	<u>4.55</u>	
Total		\$ 950.10

EXPENSES

Mailing	76.25	
Dinner	259.07	
Printing	5.93	
Coffee Cake	6.83	
Parish Council 80%	<u>477.05</u>	
Total		<u>830.83</u>
Balance		\$ 119.27

VISITATION COMMITTEE

Names of the Committee Members

Chairman	Jerry Donabedian
Secretary	Agnes Kapoian
	Dottie Dedeian

Committee Activities

No actual meetings were held. Telephone conversations have been held whenever required.

We have been sending cards of goodwill, cheer, get-well, congratulations of various kinds and sympathy.

We plan to continue the activities of keeping in touch with parishioners by sending cards. Also, if possible to include house calls.

CHURCH LIBRARY

The Church Library through the generous monetary and book donations by parishioners and friends has grown to several hundred volumes of Armenian and English books about Armenians. Besides books, the library has magazines, periodicals, and records available in both languages. Due to increasing number of books, we have extended our library shelves.

All are welcome to borrow books and numerous magazines and records in order to enrich themselves about our great heritage every Sunday morning from 10 a.m. to 12 noon from the library located in the church annex.

We like to extend our heartfelt thanks to Mr. Khosrof Katibian, the church librarian since its conception. We are sorry that he went to live in Rhode Island. We are looking for an interested parishioner to take over the duties of the church library.

Your kind donations are gratefully accepted to continue increasing our growing library.

ST. LEON'S ARMENIAN CHURCH

Comparative Budget Summary for 1969 and 1970
Proposed Budget for 1970

<u>RECEIPTS</u>	<u>ACTUAL</u> 1969	<u>PROPOSED</u> <u>BUDGET 1970</u>
Weekly Envelopes, Dues and Loose Plate Collection	\$ 7,866.91	\$ 8,500.
Special Donations - Sacraments, Funerals, Candles	3,881.18	4,000.
Net Profit from Affairs	867.77	2,500.
Sale of Books, Lradoo, etc.	232.00	250.
Holiday Donations	4,745.50	5,000.
Donations from Auxiliary Org.	5,815.11	7,500.
Misc. Income	452.89	700.
Rental Income - Cottage	<u>1,500.00</u>	<u>1,500.</u>
<u>TOTAL RECEIPTS</u>	<u>\$25,361.36</u>	<u>\$29,950.</u>
<u>DISBURSEMENTS</u>		
Pastor's Stipend, Auto Expense, Visiting Clergy	7,200.00	8,500.
Parish House Expense	505.92	2,000.
Church Repairs, Maintenance	1,474.30	2,000.
Diocesan Exp. Dues, Insurance, etc.	2,506.88	2,500.
Lradoo Expenses	451.75	450.
Cash Transfer to Saving Acct. (incl. Memorial Fund)	4,715.00	2,500.
Administrative & Gen'l Expenses	1,632.94	2,000.
Church Operating Expenses Insurance, Utilities, Office	5,919.89	5,000.
Capital Improvements to Bldg.	648.50	2,000.
Equipment Purchases, Repairs, Capital Improvements	<u>1,328.95</u>	<u>3,000.</u>
<u>TOTAL DISBURSEMENTS</u>	<u>\$26,384.13</u>	<u>\$29,950.</u>

IN LIEU OF FLOWERS DONATIONS

Our special thanks to the families and donors for the following in lieu of flowers donations in memory of their dear ones to the St. Leon's Building Fund.

<u>CONTRIBUTION IN MEMORY OF:</u>	<u>TOTAL</u>
Hachig Simonian	\$ 165.00
Mabel Tashjian	155.00
Zaven Marootian	2801.00
Edna Hamway	10.00
Tokman Bakalian	455.00
SP/4 Alan Attarian	40.00
Edward Darakjian	100.00
Hagop Tarakajian	267.00
William Grunstra	100.00
Aram Bedrosian	<u>90.00</u>
Grand Total	\$4183.00

MEMORIAL COMMITTEE REPORT

Our heartfelt thanks to the following donors for their kind thoughtfulness in donating Church Memorials in memory of their dear ones.

1968

CHURCH MEMORIAL GIFT DONORS

- \$500 Nave Main Entrance Doors in memory of Andrew S. Tilbian
by Mrs. Dovie Tilbian and daughter Andrea
- \$500 Right Nave Entrance Door in memory of Andrew S. Tilbian
by Mr. & Mrs. Alfred A. Voskian
- \$500 Left Nave Entrance Door in memory of our parents
by Mr. George Purpuse and Mr. & Mrs. Anthony Purpuse
- \$500 Outdoor Flag Pole in memory of Harry H. Nakashian
by his Family
- \$400 One Pew in memory of Nazar Egelanian
by Mrs. Satenig Egelanian
- \$400 One Pew in memory of Helen Atamian
by Mr. Jacob Atamian

1969

- \$400 One Pew by Mrs. Azniv Ajamian and Mr. & Mrs. Peter Kafafian
- \$400 One Pew in memory of Avedis Dishian
by Mrs. Arshalouys Dishian and son Robert
- \$400 One Pew in memory of Gamgochian and Dertadian Families
by Mrs. Arax Gamgochian and son Peter
- \$250 Church Chandelier in memory of SP/4 Alan Attarian
by his parents Mr. & Mrs. Monroe Attarian

BUILDING FUND

INCOME

Checking Account	12/31/68	\$	3728.11
Savings Account	12/31/68		2562.37
Pledges			8081.75
In Lieu of Flowers			3978.00
Donations			320.00
Interest on Savings Account			<u>102.97</u>
	Total	\$	18773.20

EXPENSES

Mortgage Payments			<u>11583.00</u>
	Balance	\$	7190.20

PROOF

Checking Account	691.25
Savings Account	423.95
Savings Certificate	<u>6500.00</u>
	\$ 7615.20*

*Loan from Parish Council \$500.00
Sub.Transfer to proper acct. 75.00
\$425.00

Mortgage Balance 12/31/69 \$56,749.22

This amount is payable within 6 years.

TRUST FUND

St. Leon's Armenian Church Trust Fund Members are:

E. George Dabagian
Zaven Marootian*
James Noorigian

*Zaven Marootian past away during 1969.

1. First Savings and Loan		\$ 3290.21
Fair Lawn	1969 interest	215.89
2. First Savings and Loan		2992.11
E. Paterson	1969 interest	201.65
3. Savings Certificates	a.	5000.00
	1969 interest	125.78
	b.	5000.00
	1969 interest	<u>125.78</u>
	Grand Total	\$16951.42

PARISH COUNCIL

1. First Savings and Loan		\$ 7764.07
Fair Lawn		
2. Savings Certificate		10000.00
Fair Lawn State Bank	1969 interest	<u>251.56</u>
	Grand Total	\$18015.63

BUILDING FUND

Savings Certificate		\$ 6500.00
Fair Lawn State Bank	1969 interest	<u>163.51</u>
	Total	\$ 6663.51

人
一
一

人
一
一